Արձանագրություն № 2

«ՇԲՕ-ՇՀԾՁԲ-17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք.Երևան, Զորափի 40 | 10.11.2016թ. ժ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Հովհաննես Մարությանը
Հանձնաժողովի անդամներ՝	Սամվել Մանուկյանը, Հովհաննես Հարությունյանը
Հանձնաժողովի քարտուղար՝	Կարինե Սարգսյան

1. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման մասին

(Հ.Մարության)

1.1 Հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և հրապարակեց գնման առարկայի նախահաշվային գինը մեկ թվով արտահայտված՝ 2'196'000 ՀՀ դրամ:

1.2 01.11.2016թ-ին № «ՇԲՕ-ՇՀԾՁԲ-17/1» ծածկագրով հրավերը էլեկտրոնային եղանակով՝ carayutyun-15-6@shh.gnumner.am հասցեով, ուղարկվել է «Գնումների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն հրապարակված՝ «Ծառայություններ» → «Համակարգչային տեխնոլոգիաների և ծրագրային ապահովումների մշակում և սպասարկում» ցանկում ընդգրկված կազմակերպություններին, ինչպես նաև սահմանված կարգով հրավերը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

1.3 Ընդունել ի գիտություն, որ

սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

h/h	Կազմակերպության անվանումը	Հասցե, հեռախոս, էլ.փոստի հասցեն
1	«Լոկատոր» ՓԲԸ	ք.Երևան, Ադոնցի 8; 010-28-58-28; info@locator.am

1.4 Ընդունել ի գիտություն, որ.

կազմակերպության կողմից ներկայացված գնային առաջարկը հետևյալն է՝

No	Կազմակերպության անվանումը	Արժեք	ԱԱՀ-ն (ՀՀ դրամ)	Առաջարկված գինը (ՀՀ դրամ)	*Առաջարկված գինը մեկ ամսվա համար (ներառյալ ԱԱՀ)*	Առաջին և հաջորդաբար զբաղեցրած տեղերը
Չափաբաժին 1 **Շարժական օբյեկտների մոնիտորինգային ծառայություններ**						
1	«Լոկատոր» ՓԲԸ	1824000	364800	2188800	*182'400*	1-ին տեղ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1.5 Հրավերով (ծանուցումով) սահմանված՝ ծրարի կազմման և ներկայացման, բացված ծրարում հրավերով (ծանուցումով) պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով (ծանուցումով) սահմանված պայմաններին նախնական տվյալներով համապատասխանում է՝ «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1.6 Ընդունել ի գիտություն, որ.

- բանակցություններ չեն վարվել,
- հայտի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1.7 Հանձնաժողովը որոշեց ՀՀ ՖՆ հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերով սահմանված «Ֆինանսական միջոցներ» որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1.8 Հանձնաժողովը որոշեց ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները ամփոփելու նպատակով նիստ հրավիրել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից համապատասխան եզրակացությունը ստանալու հաջորդ օրը, բայց ոչ ուշ քան 2016թ. նոյեմբերի 17-ին ժամը 10:00-ին, ք.Երևան, Զորափի 40 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Հ.Մարության

Անդամներ՝ _____ Ս.Մանուկյան

_____ Հ.Հարությունյան

Գնումները համակարգող՝ _____ Կ.Սարգսյան